

ՄՈՎԱԶՍ ԽՈՐԵՆԱՑԻՆ ԸՍՏ Հ. ՂԵՒՈՆԴ ԱԼԻԾԱՆԻ

Քաղաքական կեանքի խոտոր ընթացքով պայմանավորված՝ Հ. Ղ. Ալիշանը՝ ներհուն գիտնականը, բանաստեղծը, դիմելով անցեալին, նպատակ ունէր հայ մարդու մէջ վերականգնել անցեալի ճշմարիտ պատկերը, սերունդներին առաջ դնել արժանաւոր գործերի օրինակ, նրանց հոգում բորբոքել ժողովրդի քաղաքական իդէալներ, հպարտութեան զգացումներ: Այդ պատճառով նա դիմում է թէ՛ Աստուածաշնչին¹, թէ՛ հայրենի ու օտար աղբիւրներին եւ թէ՛ համաշխարհային գրականութեան, պատմագրութեան բոլոր տուեալներին՝ կատարելով հսկայածաւալ աշխատանք²: Նա մի նոր սկիզբ էր դնում ազգային-քաղաքական դաստիարակութեան բարերար ավանդին եւ հայկական գիտութեանը: Աստուած հայ ազգին կրկին ընծայել էր մի նոր Խորենացի, որ իւրովի էր իմաստաւորելու հայ ժողովրդի պատմական ուղին. «Մոգական էր նա ... նա մո'գ մ'էր, Հայաստանի բաղդի աստղը փնտռող մոգ մը...»³:

Հ. Ղ. Ալիշանի «Ողբամ գեեզ, Հայոց աշխարհ» (1848) քերթուածը հայ ժողովրդի ցաւի համապարփակ արտայայտութիւնն

1 «Գերագոյն գրքերը իրեն համար Աստուածաշունչն ու Խորենացին էին ... քիչ մը նման այն երկու բնութիւններուն որ՝ ըստ աստուածաբաններուն՝ Քրիստոսի մէջ անշփոթօրէն միանալով միակ անձ մը կը կազմեն»: Տե՛ս ԶՊԱՆԵԱՆ, Ա., *Դեմքեր, (Հ. Ղեւոնդ Ալիշան)*, Փարիզ 1924, 85-86:

2 «Իր հատորների եւ մեր հոգիների մէջ վերակերտեց նա Հայաստան աշխարհը եւ պատեց մի վիպական, բանաստեղծական մթնոլորտով՝ գեղեցիկ, հրապուրիչ, առասպելական, բայց եւ իրական»: Տե՛ս ԻՍՍՀԱԿԵԱՆ, Ա., *Ղեւոնդ Ալիշան*, Երկեր, Եր. 1987, 710:

3 ԵՐԵՄԵԱՆ, Հ. Ս., *Կենսագրութիւն Հ. Ալիշանի*, Ս. Ղազար, Վենետիկ 1902, 184:

է, իւրօրինակ խտացումը: Սրանում բանաստեղծ Ալիշանի երգի զգայութեան բարձրակէտը, Մ. Խորենացու «Ողբ»ի համեմատութեամբ, աւելի բարձր է: Նրա «Ողբ»ը որոշ իմաստով հակադրւում է Խորենացու «Ողբ»ին: Եթէ Քերթոզհայրը հայ ազգի ողբերգութեան ակունքը որոնում է նրա հոգեկերտուածքի շեղումներէ մէջ, ապա Ալիշանը՝ նաեւ դրանից դուրս: Պատճառը օտարներէ՝ պարսիկի ու բարբարոս ցեղերի մոտքն էր հայոց աշխարհ, որ բերել էին ոգու ուժացում: «Չարն ուզէ գեղ, ո՛վ իմ բարի աշխարհի Հայոց...»: Ալիշանը ոգեկոչում է նոր Հայաստանի գաղափարը («Ո՛հ, թող մեռնի ծեր Նահապետ, մտնու տապան, // Այլ թող ելնէ՛ ի տապանն մոր Հայաստան»⁴), որ տեսնում էր միայն կռուի, պայքարի, ոգեղէն ընդվզման մէջ, ասելով՝ հայք «թող գընա՛ն կռիւք, // Երթա՛ն մախանձ, թող գայ սէր, թող միանան սիրտք»⁵ (այս եւ յետագայ ընդգծումներն իմն են՝ Ն. Ս.): Բանաստեղծը ծանրանում է հերոսական հոգեբանութեան վրայ, որ շրջադարձային էր հայ գրականութեան համար: Գրականագէտ Ա. Տէրտէրեանը նկատում է, որ «Մովսէս Խորենացու եւ Փաւստոս Բուզանդի հետեւողութեամբ՝ Ալիշանը իր պատմական հերոսներին դարձրել է հայրենիքի անկախութեան, միութեան եւ ամուր պետականութեան ներկայացուցիչներ»⁶:

Կարծում եմ՝ պատահական չէ Ա. Զօպանեանի այն համոզումը, համաձայն որի՝ Ղ. Ալիշանը անուղղակի կերպով նպաստել է հայ ազատագրական պայքարի շարժմանը. «Ալիշանի գործը... որ ծայրէ ծայր ուրիշ բան չէ բայց եթէ ապացուցանելու որ հայ ազգը մեծ, հզօր, ազնիւ, ազատ, քաջ է եղած անցեալին մէջ, անուղղակի կերպով, բայց շատ հզօրապէս նպաստած է հայ ազատագ-

4 Ա.ԻՇԱՆ, Հ. Ղ., *Երկեր*, Եր. 1981, 28:

5 «Հայրենիքի դժբախտութեան հանդէպ ունեցած այդ «ողբ»ն իր մէջ պարունակում է բողոքի, ընդվզման, ակտիւ հայրենասիրութեան տարրեր, որն ամենեւին չի կարելի անտեսել»: Տե՛ս ԾՏԻԿԵԱՆ, Ա., *Ղեւոնդ Ալիշանի հայրենասիրական պոեզիան*, Եր. 1959, 22-23;

6 ՏԵՐՏԵՐԵԱՆ, Ա., *Հայ կյանքներ*, (Ալիշանը եւ հայրենասիրութիւնը), Եր. 1944, 65: Գրականագէտ Ա. Տէրտէրեանը նկատում է նաեւ՝ «Հին հայ գրողներին եւ հերոսներին Ալիշանը գնահատում է իրրել իր Հայկակների, այսինքն երիտասարդութեան դաստիարակներ, որոնք սովորեցնում են հայրենասիրութիւն, արհամարհանք մահուան հանդէպ եւ ունեցածը, ձեռք բերածը պաշտպանելու ամուր կամք եւ վճռականութիւն»: Ամդ, 65:

րակամ պայքարի շարժման ծննդեանն ու անմանը արդի հայ մտքին մեջ»⁷:

Հ. Ղ. Ալիշանը առաջին անգամ Մ. Խորենացուն դիտարկում է ոչ միայն իբրեւ պատմիչ, այլեւ գեղարուեստական կերպար, որն ապրում է իր ժողովրդի քաղաքական, բարոյական անկման ծանրագոյն կորստի կսկիծը, դրաման. «Ար' ե'կ, ար' ե'կ հայր իմ ողբոցըս դու Մովսէս, // Իմ սիրտ այլ չի' երթալ, ասա' դու քաջ գիտես. // Քո երեսիկդ ու քո Զաքարդ հե'տ առ ողբա' // Հայոց ազգիս տաքակուսեալ գըլխուն վըրայ»⁸:

Հարկ է նշել, որ առանց Հ. Ղ. Ալիշանի՝ չէր կայանալու նորագոյն բանաստեղծութեան մտածողութիւնը: Սակայն պէտք է նկատել, որ նրա գրականութիւնը ունեցաւ նաեւ «բացասական» հետեւանքներ: Հ. Ղ. Ալիշանի բանաստեղծական ժառանգութիւնը ծանրանում էր մի սահմանափակ՝ քաղաքական թեմայի շուրջ՝ ստեղծելով բանաստեղծութեան նեղ օղակ⁹. յաւերժական բանաստեղծութեան թեմատիկան խորթ մնաց նրա բանաստեղծական մտածողութեանը:

Խոր կսկիծը, տագնապը Հայաստանի գալիքի, պատմական բախտի նկատմամբ, ինչպէս վերը նշուեց, ներհուն գիտնական, բանաստեղծ Հ. Ղ. Ալիշանին ստիպում են դիմել անցեալին¹⁰. «Մեր վանքի մատենադարանի ամբողջ ձեռագիրներն (1600) մա կարդացեր եւ քննէր է խղճամիտ հետաքրքրութեամբ, այդ անծանօթ մագաղաթներէն քաղեր է հայ պատմութիւն, գիտութիւն, արձանագրութիւն, մա իրեն համար մեր գրչագրաց մեջ աւանդուած նիւթերուն յատուկ ցանկն կազմած էր, որ իր հնախօսական գրուածքներուն առաջնորդ կ'ըլլար»¹¹:

7 ԶՊԱՆԵԱՆ, Ա., Դեմքեր, (Հ. Ղեւոնդ Ալիշան), Փարիզ 1924, 100:

8 ԱԼԻՇԱՆ, Հ, Ղ., Երկեր, 28:

9 Այս առումով հարկ է նշել, որ Ռ. Պատկանեանի ստեղծագործութիւնը, Պ. Դուրեանի առաջին բանաստեղծութիւնները եւս հայրենասիրական երգեր էին:

10 «Անցեալի վերյուշը, պատմական դրուագների, դեմքերի ու դեպքերի վկայակոչումը Ալիշանի համար ինքնանպատակ չէր: Նահապետը սրբազան սարսուռով ու ներհուն հպարտութեամբ է վերապրում հայոց կենսագրութեան փառապանծ յիշատակութիւնը»: Տե՛ս ՄԱՐԳԱՐԵԱՆ, Ս., Ղեւոնդ Ալիշան, Հայ գրականութեան պատմութիւն, հ. 3, Եր. 2015, 184:

11 ԵՐԵՄԵԱՆ, Հ. Ս., նշ. աշխ., 153:

Անուրանալի է Ղ. Ալիշանի դերը խորենացիագիտութեան սկզբնաւորման եւ կայացման գործում: Նա առաջիններից էր, որ վերարժեւորեց, վերաիմաստաւորեց Մ. Խորենացու անձի, նրա «Պատմութեան» դերն ու նշանակութիւնը հայ ժողովրդի ինքնութեան, պետականութեան, արժանապատուութեան պահպանման հարցերում՝ հանդէս գալով Պատմահօրը նուիրուած թէ՛ առանձին յօդուածներով եւ թէ՛ ստուարածաւալ աշխատութիւններում («Հայապատում», «Յուշիկի հայրենեաց հայոց» եւ այլն) նրա «Հայոց պատմութեան» վկայակոչումներով, յիշատակումներով: Տեղին է յիշատակել Դ. Վարուժանի դիպուկ բնութագրումը. «Ան (իմա՝ Հ. Ղ. Ալիշանը - Ն. Ս.) բանաստեղծ էր, որ գիտութիւն կ'ընէր, ոչ թէ միայն նշմարութիւն մը փոխադրածիւ միակ մտահոգութեամբ, այլ նաեւ ա՛րգ մը երեսն քերելու համար լոյս աշխարհիքն»¹²:

Փոքր-ինչ առաջ անցնելով՝ նշենք, որ Ժ.Ը. դարի վերջերից սկսած, Մ. Խորենացին ենթարկուեց եւրոպացի հայագէտների քննադատութեանը: Նրանք այն համոզման էին, որ Խորենացու «Պատմութիւնը» գիտական կասկածներ է ներկայացնում: Հ. Ղ. Ալիշանը առաջիններից մէկն էր, եթէ ոչ առաջինը, որ իր ծանրակշիռ խօսքն ասաց այս հարցի վերաբերեալ՝ կատարելով մեծ հետազոտութիւններ, մատենադարանից, հնօրեայ ձեռագրերից հաւաքելով փաստեր, այս կամ այն պատմիչի՝ Խորենացու մասին ասուած վկայութիւններ, աննշան թուացող տեղեկութիւններ:

Այսպէս, «Մովսէս Խորենացի եւ իր Հայոց պատմութիւնը» յօդուածում Ալիշանը նկատում է, որ Խորենացին այն քիչ վարդապետներից է, որ թէ՛ իրենց անարատ վարքով, թէ՛ ազգին եւ թէ՛ օտարներին օգտակար լինելով, յիշուի մեծ են կոչուած երկրում ու երկնքում: «Հայաստանի երկու հազար տարուան հիւսած ուսումնական պսակին ամենէն պայծառ ծաղիկն է...: Հայոց ազգին անհրաժեշտ մէկ պարտքը պէտք է ըլլայ նաեւ այնպիսի անձի մը վարք գիտնալը՝ որ արժանապէս ըսուեցաւ հայր եկեղեցւոյ եւ հայր դպրութեանց, սուրբ եւ մարգարէ, պատմաբան, մարգարէ հնախոյզ, գլուխ բանասիրաց, պերճախօս, քերական, աշխարհագիր, թարգման, դպրապետ եւ այլն»¹³: Նա չորրորդ դարի վերջերին Հայաստանին

12 Ա.ԱՌԻԺԱՆ, Դ., *Ալիշան եւ Պէշիկթաշեան*, ԵԼԺ, Երեւ Խատորով, հ. 3, Երեւան 1987, 183:

13 «Բազմավէպ», Վեցեօկի 1847, քիւ 10, էջ 150: (Այսուհետ այս եւ միւս՝ յօդուածին առնչուող մէջբերումները կարուեն սոյն համդէսից՝ էջը նշելով կից):

ընծայուեց: Աստուած ինքը իր ազգին կրկին պարգեւ անելու համար Խորենացու կեանքը 110 կամ 117 տարի երկարացրեց: Աստուած ինքը Մաշտոցի ջանքը վարձատրեց: Ըստ Հ. Ղ. Ալիշանի՝ Խորենացին երկու բանի հետեւեց՝ աստուածասիրութեան եւ իմաստնութեան՝ «Խելացի մեղուի պէս քաղցր ծաղկներու վրայ իջնալով, եւ ֆարսաք մկարչի պէս զանազան գոյներով միտքը զարդարելով» (150): Իսկ աւելի ուշ Ալիշանը Խորենացու «Պատմութիւնը» պիտի բնորոշէր իբրեւ «գունագոյն մարտանկար բանաւոր հիւսուած մը»: Նա համոզուած է՝ «Թէ որ բաղդ ըսածդ կոյր չըլլար, մանաւանդ՝ թէ որ Աստուծոյ կամքը մեր փափագին հետ միանալու ըլլար, Մովսէսի իրեն ուզած Արամայ ու Տիգրանայ օրերը պէտք էին, որ թագաւորական ուժին վրայ կոթընած՝ Աթենքի դարերը Հայաստան փոխադրէ եւ Յունաստանի մախանձելի մախանձորդ ազգ մը հանէ: Բայց զուրկ մնացինք աւ երջանկութենէն» (151): Ալիշանը խոր կակիծով է գրում, որ Արշակունեաց թագաւորութեան անկումից յետոյ Խորենացին հասարակ մարդու պէս մոռացուեց: Մինչդեռ Մխիթար Հայրը պատգամել է յաւերթօրէն՝ «Բարձրում ըստ Մովսիսի Խորենացոյ իմինն զպարկա մեր ի մանապարհի» (151): Սոյն յօդուածում Ալիշանը խօսում է նաեւ Խորենացու «Պատմութեան» հաւանական չորրորդ գլխի մասին, որ յիշատակել է Թ. Արծրունին¹⁴: Բացի սրանից՝ նա յիշատակում է նաեւ «Պիտոյից գիրքը», որ Խորենացին իր Թէոդորոս աշակերտի համար է գրել, ապա՝ քերականական գրուածքներ, Հռիփսիմեանց համար է գրել, ապա՝ քերականական գրուածքներ, Հռիփսիմեանց համար է գրել, ապա՝ քերականական գրուածքներ, Վարդապետի ճառը, Սուրբ Աստուածածնայ ազգատոհմի պատմութիւնը, շարականներ, աղօթքներ եւ այլն:

14 Այս վարկածը Հ. Ղ. Ալիշանը կրկին քննում եւ առանձին ուսումնասիրութեամբ անդրադառնում է իր «Յաղագս Մովսիսի Խորենացոյ Դ. անուանեալ գրոյն պատմութեան» յօդուածում. «Իսկ վերակոչութիւն կոչուեալ պատմութեանը ըստ Թովմայի յիշատակութեանց ոչ ուրեք երրորդի հատուածեալ դրուագին. Հատած կոչին եւ Գ. գիրքն ի սկզբումն եւ ի գլխակարգութեան, թէպէտ եւ ի կատարածին ասիցէ Աւարտեցան Գ. գիրք: Սակայն ի դեպ է եւ չորրորդի գիրք կոչումն եւ այն ի մատենագրէն իսկ որպէս զկնի ուրեմն յիշեցից. իսկ գիրքագիր յորջումն ի Թովմայէ կարծեմ սեփականեալ, որպէս եւ զառաջինն կոչեմուպէս եւ գիրքութեանդ կոչումն»: Տե՛ս *Քաղմալէպ*, Վեներտիկ, 1851, թիւ 5, էջ 70:

Ալիշանը, ինչպէս վերը նշուեց, վերաիմաստաւորում, գերարդիականացնում էր «Հայոց պատմութեան» դերն եւ նշանակութիւնը, որով «Հայաստան իր հին ու կորսուած գրականութեան մէկ ճաշակը կ'առնէ. անով 1400 տարուանէ ի վեր Հայք իրենց ազգը եւ փառքը կը ճանչնան. ան է բոլոր աշխարհիս դիմաց մեր հին ազնուականութեան վկայագիրը, որ ուրիշ ազգ մը չկրնար յափշտակել կամ ուրանալ... անով Յունաց եւ Հռոմայեցոց պատմիչները քանի մը տեղ սրբագրել, եւ տեղ տեղ հնութեան եւ ընդհանուր պատմութեան վրայ նոր լոյս ծագել, որ ուրիշ տեղէն անկարելի է առնելը» (153): Հ. Ղ. Ալիշանը առաջիններից է նշում *Խորենացու* «Պատմութեան» գլխաւոր աղբիւրները, որոնք են՝ Մար Աբաս Կատինա, Ղերուբնա, Ողիւպ, Խոռոհբուտ, Բարդաժան եւ այլն: *Յետագայում՝ 1901ին իր* «Հայապատում. Պատմիչք եւ պատմութիւն հայոց» գիտական աշխատութեան մէջ նա կրկին անդրադառնում է *Խորենացու* «Պատմութեան» սկզբնաղբիւրների հարցին եւ խոր ուսումնասիրութիւններից յետոյ ապացուցում, որ իսկապէս նա օգտուել է Մար Աբաս Կատինայի, Ալեքսանդր Բազմավէպի, Ափրիկիանոսի, Բերոսոսի եւ այլնի գրքերից¹⁵: Մանաւանդ վերջինը գտնում է, որ հայ պատմիչները տալիս էին իրենց ժամանակի, կրօնի եւ քաղաքական կեանքի կենդանի պատկերը: Հ. Ղ. Ալիշանը եզրայանգում է՝ այդքան աղբիւրներից դուրս բերուած պատմութիւնը ցոյց է տալիս, որ *Խորենացին* աշխատել է ճշմարիտ պատմութիւն գրել, որովհետեւ բուն պատմութեան հոգին ճշմարտութիւնն է, եւ «թէ որ մէջը առասպելներ ալ կան՝ հոն իմքն ալ կը վկայէ թէ ասոնք առասպելներ են» (154): Իսկ ամէնից առանցքայինն այն է, որ նա ճշմարտութիւնը երբեք ստուերի տակ չի թողնում, ինչպէս յոյն եւ հռոմէացի պատմիչները: Դրանով է պայմանաւորուած Ֆրանսիացի մատենագրի բնորոշումը՝ «Խորենացուն մէջ չհաւատալի բանին ալ հակառակիլը դժար է» (154): Նա ցաւով է նշում, որ արեւմտեան գաղափարներով նախապաշարուած մի քանի հեղինակներ պատմագիր *Խորենացու* ճշմարտութեանը կասկածեցին, ինչպէս Յրեբեն, Վոլնէյը, Վիսկոնտը եւ այլք: «Վոլնէյի հոգով գրողին՝ որ իր իմաստութեանը վրայ չափէն աւելի վստահացած՝ չէ թէ միայն Մովսէս Խորենացիին պատմութիւնը՝ հապա Մովսէս մարգարէին գրածն ալ կ'ուրանայ, աւելորդ էր պատասխան տալ» (154): Ալիշանը

15 Մինչալիշանական հետազոտողներից ոչ ոք, նաեւ նրանից յետոյ Էջերը նման ուշադրութեան արժանացրին Մ. Խորենացու գրքի սկզբնաղբիւրների խնդրին:

հերքում է նաեւ մէկ այլ քննադատութիւն. նա ապացուցում է, որ պատմագիրը, թէպէտ արեւելցի, սակայն յոյն մատենագիրներին է հետեւել: Ինքը՝ Յրերէն է փաստում, որ Խորենացու «Պատմութեան» մէջ մի քանի բան կայ, որ պէտք է իրենից վերցնել կամ յոյների հետ բաղդատել: Ղ. Ալիշանը ազնիւ զայլորթով այդ կասկածամտութիւնը կապում է եւրոպական նախապաշարմունքի հետ, որ «Յունաց եւ Հռոմայեցոց պատմիչները չափէն աւելի յարգի սեպած է, կամ թէ ըսեմ չափէն պակաս»: Աւելի իրատեսական լինելու համար նա ասում է՝ յանկարծ թիւրիմացաբար չկարծուի, թէ ինքը ազգասիրական նախապաշարմամբ Խորենացուն անսխալ հեղինակ է համարում: Ըստ նրա՝ միայն այսպիսի կասկած աստուածաշնչեան գրերի վրայ չունի, իսկ Խորենացու հմտութեանը, սրբութեանը նայելով՝ կարող է վկայել, որ նա երբեք իր կամքով չի սխալուել, կամ էլ առանց քննութեան դրել այն բաները «որոնցմով կը տարաձայնի ուրիշներէն. Թերեւս տեղ-տեղ իր ընտրութեանը մէջ սխալած է, զարմամբ չէ, եւ ոչ այնչափ ամօք՝ որչափ զինքը սրբագրել ուզողներուն սխալմունքը» (154): Ալիշանը Պատմահօր թերութիւններէից է համարում «Ժամանակագրութիւն չանելը, որ խիստ անհրաժեշտ էր, եւ, առանց դրա, շփոթութիւններ են ծագում. «Ինքն որ այնպէս մտադրութեամբ քննէր էր Կոնստանտինոպոլիսը, Դիոդորոսը, Ափրիկանոսը, Յովսէփոսը, Եւսեբիոսը, Աստուածաշունչը եւ Աստուածաշնչին վրայ գրած մեկնութիւնները, եւ իր պատմութեան սկիզբը զանազան համեմատութիւններ կ'ընէ, ինչո՞ւ պատմութեան մէջ ալ չխառնէ՞ չգիտցուի» (155): Չնայած տարակուսանքին՝ նա մի ներքին համոզում ունի. «Թերեւս միտք ունէր գրելու, կամ թէ գրած ալ ըլլայ ժամանակագրական ցանկ մը բոլոր պատմութեան ետեւէն» (155):

Յատկանշական է, որ յետագայում Ալիշանը «Հայապատում. Պատմիչք եւ պատմութիւնք հայոց» աշխատութեան մէջ կրկին անդրադառնում է այս հարցերին, քննադատում Մ. Խորենացուն, որ պատմութեան մէջ կան անստույգ մասեր ոչ թէ հին Հայկազեանց պատմութեան նկատմամբ, այլ «նոր ժամանակի Արշակունեաց եւ Քրիստոսի առաջին հիմն դարուց դիպուածոց մէջ եւս»: Եւ, կարծես թէ, սրա պատասխանը ունի. գուցէ սկիզբնագիրը խեղաթիւրուե՞լ է օտար ձեռքերի կողմից կամ «շատ բան ծերութեանն ատեն գրելով շփոթած ըլլայ»: Ի վերջոյ, նա այս հարցը թողնում է ապագայ ուսումնասիրողներին:

Ալիշանը բարձր է գնահատում Խորենացու՝ բացառիկ, ինքնատիպ պատմիչ լինելը, նրա անաչառութիւնը. «Թերեւս իրեն նման

պատմագիր մը չկայ, որ ազգային հոգին արդարութեան հետ այնպէս լաւ միաբանած ըլլայ» (155): Նա դրուատանքով է խօսում պատմագրի հաւասարակշռութեան մասին, որ թէեւ սիրում է իր ազգին, բայց պախարակելի գործերը առանց յանդիմանութեան չի թողնում, առաքինի գործերն էլ՝ առանց դովաբանութեան: Եւ ինչպէս Հոմերոսը «ամէն ազգաց գաղափարներուն աղբիւր է, այսպէս ալ Խորենացին մեր ազգին պատմչաց եւ հնախօսաց աղբիւրն է եղած» (155): Անդրադարձ է կատարւում նաեւ պատմահօր առինքնող, իւրայատուկ ոճին: Նա երբեմն պերճախօս է, երբեմն իմաստասէր. «Եւ իրեն լայն ճակտին վրայ մառազայթած՝ Երոդոտոսի, Հոմերոսի, Պղատոնի հանճարը, եւ Երեմիայի ու Քրիստոսի լոյսը» (155):

Յօդուածը եզրափակելիս Ալիշանը ցանկանում է, որ Հայաստանը նոր երախտագիտութեամբ նայի իր պատմահօր վրայ, որ «նշմարտապէս իրեն հայր եղաւ, եւ ազատեց իրեն անունը եւ փառքը ժամանակին գրկանքէն, ծուռ կարծիքներու զենքերէն, եւ արեւելեան աննշան ազգաց ազգաց կարգէն: Խորենացւոյն հետ փառաւորութի իր Մեկեմսան ալ Սահակ Բագրատունիին» (155):

«Մովսէս Քերթոզահայր հայոց» յօդուածում Հ. Ղ. Ալիշանը չէշտը դնում է հիմնականում Խորենացու անձի, նրա բացառիկ տեսակի, անմնացորդ նուիրումի, հայրենասիրութեան, աստուածային շնորհների վրայ: Համոզուած է՝ իր գրիչը չի կարող նրա կատարելութիւնը տալ: Նա պատմահօրը համեմատում է Հոմերոսի, հրեաների Մովսէսի հետ, նրան աներկբայօրէն համարում՝ պատմահայրերի ակնադբիւր, «քանաստեղծութեան վառիչ», ճարտասանութեան օրինակատու, «աշխարհագրաց մախաշաւիղ», «քարգմանչաց գահագլուխ», վարդապետների վարդապետ, հնագէտ ու մարդարէ: Սակայն «այս ամէն անուններէ վեր յատուկ կոչմամբ ինքն Քերթոզահայր Հայոց»¹⁶:

Յօդուածում կրկին արծարծւում է այն ցաւոտ հարցը, որ Մ. Խորենացին, վերադառնալով Հայաստան եւ ցանկանալով իր «գիտութեամբ զարդարել» երկիրը, արժանւոյն չի գնահատուել եւ անտարբերութեան, մոռացութեան է մատնուել: Այս առումով Ալիշանը մեծ յուզականութեամբ է ներկայացնում Գիւտ կաթողիկոսի եւ Քերթոզահօր հանդիպումը՝ հիմնուելով իրեն հասած գրաւոր եւ բանաւոր աւանդութեան վրայ:

16 Բագմալէպ, Վենետիկ, 1849, քիւ 4, էջ 51:

Գիտնական Ալիշանը իր աշխատութիւններում բազմիցս է նշում եւ կարեւորում այն հանգամանքը, թէ բախտաւոր է այն ազգը, որ ի սկզբանէ իր նախնիների երկրի մէջ է ապրում. «Որ-ազգը, որ ի սկզբանէ իր նախնիների երկրի մէջ է ապրում. «Որ-ազգի բարեբաղդ է, կ'ըսեմ, այն ազգն՝ որ ի սկզբանէ ի վեր համա-լեզու մախնեաց երկրին մէջն է կեցեր... ունենալ յատուկ եւ բնիկ լեզու մը, սահման մը, քաղաքաւարութիւն մը, ծէս մը, եւ յիշատա-կարաններ, որոնց համար բարեկամ բարեկամի հետ խօսելով կարե-նան ըսել մերը. այս կատարեալ հայրենիք է, երկրիս ո'ր կողմն այլ որ ըլլայ, ինչ դիրք այլ որ ունենայ»¹⁷: Նա իրաւացիօրէն գերար-ժեւորում է ազգային յիշատակարանների դերը ազգապահպանու-թեան, ինքնութեան պահմանման, քաջերի գործերի եւ առաքի-նութիւնների փոխանցման մէջ: «Յուշիկ հայրենեաց հայոց» ստուարածաւալ աշխատութեան առաջին հատորում գրում է. «Ազգային յիշատակարանք. ստոյն են բնիկ նշանք հայրենեաց. ա-ստոյն են իւրաքանչիւր ազգի հայրենեաց ամենէն յայտնի, ամենէն ազդու եւ զօրաւոր արձանագրութիւնք»¹⁸: Այս առումով կրկին վկայակոչում է պատմահօր խօսքը՝ թէպէտ հիմա փոքր ազգ ենք, սակար եւ օտարի իշխանութեան տակ ընկած, սակայն բազում քաջութեան գործեր կան մեր աշխարհում:

Հ. Ղ. Ալիշանը «Հայապատում. Պատմիչք եւ պատմութիւնք հայոց» գիտական, արժէքաւոր աշխատութեան մէջ, առաջնոր-դուելով «ամէն ազգի սեփականագոյն յիշատակն իր Պատմութիւնն է» գաղափարով, խորութեամբ ուսումնասիրում է մեր հնագոյն եւ պատմիչներին, նրանց աշխատութիւնները: Եւ, բնականաբար, ծանրակշիռ դեր ու նշանակութիւն է տալիս Մ. Խորենացուն: Նա շատ է կարեւորում այն հանգամանքը, որ հին պատմիչներից մի քանիսը իրենցից առաջ եղած պատմիչներին յիշատակել են. «Այսպէս ընողներուն այլ առաջինն է առաջադէմ Խորենացի, որ մեր ազգը յիշող հին պատմիչները նշանակել, որ եւ է ազգ ըլլան. ինչպէս գրեթոսս կամ Պիտոս քաղաքացի, Արիւդեմոս, Ադեֆսանդր Բագմալէպ, Խոռոհրոտ, Ողիւպ կամ Ողիւմբ, Բարդածան, Ափրիկա-նոս, Ագաթանգեղոս, Մար Աբաս, Եւսեբի, Բանան, Գուգի, Դաւիթ, Բոն'դ որք պատահաբար բան յիշեր են գիտաց»¹⁹: Պակաս կարեւոր

17 Ա.ԼԻՇԱՆ, Հ. Ղ., *Յուշիկ հայրենեաց հայոց*, հ. Ա., Ս. Ղազար, Վենե-տիկ 1869, 7-9:

18 Անդ, 16:

19 Ա.ԼԻՇԱՆ, Հ. Ղ., *Հայապատում. Պատմիչք եւ պատմութիւնք հայոց*, հ. Ա., Վենետիկ 1901, 11: (Այսուհետ յղուածին առնչուող միւս մէջբերումները կարուեն այն գրքից՝ էջը նշելով կից):

չէ նաեւ հայ պատմիչները՝ տարբեր լեզուներով (լատիներէն, իտալերէն, ռուսերէն, անգլերէն, հունգարերէն, թուրքերէն) թարգմանուած լինելը, որոնցից «Ամենէն հռչակելոյն Մ. Խորենացոյ՝ այլեւայլ լեզուաւ եւ կրկին նոյն լեզուաւ տասն քարգմանութիւնք եղած են, իսկ քննադատութիւնք թիւր եւ ուղիղ՝ այնչափ մինչեւ ի ձանձրութիւն» (14): Օտարները, շնորհիւ թարգմանութեան, լրացնում են իրենց պատմութիւնը եւ ուղղում սխալները: Թարգմանութիւններից աւելի, ինչպէս վերը նշուեց, եւրոպացի հայագէտները քննադատել են նրան (Կարիեր, Գոլտշմիտ եւ այլն)²⁰: Ուստի պատահական չէ, որ այս գրքում Հ. Ղ. Ալիշանը կրկին անդրադառնում է Մ. Խորենացուն ուղղուած քննադատութիւններին՝ հանդէս գալով հիմնաւոր ապացոյցներով:

Օտար լաւագոյն հայագէտներից Ա. Սէն-Մարտէնը՝ խիստ քննադատը, խոստովանել է, որ հայերը խնամքով աշխատել են «ընտրութեան եւ զգուշանալու յաւելորդ բանից, իսկ գրաւորական ոգով գերազանցեմ քան զարաբայիս եւ Պարսիկս, նա եւ քան զբազումս ի Բիւզանդացոց, եւ առանց հեռանալու յարեւելեան ֆաշակէ՝ հեռի են յայլանդակ ցնորքներէ եւ ի փալից շատախօսութեմէ. առանց մեծաբանութեան շատերն (որպէս Եղիշէ, Ղազար, Խորենացի) իրենց ֆարտար եւ պերճախօս գրութեամբ՝ կրնան կարդացուիլ յետ Յունաց եւ Հռովմայեցոց մեզի ընծայած օրինակագիր հեղինակաց» (15): Ա. Սէն-Մարտէնը այն համոզման է, որ հայ պատմիչների տուած տեղեկութիւնները «Ասիոյ պատմութեան քողած մէկ մեծ դատարկը լեցընեն» (16): Իսկ Մ. Ֆ. Բրոսէն մեր պատմիչներին ոչ միայն հաւատարիմ եւ ճշմարտախօս է համարում, այլեւ գտնում, որ շատերն «կրօնական անձինք էին, այլ զի եւ ամենքն այլ կ'ընծայեն զկենդանի պատկեր իրենց ժամանակին, կրօնից եւ քաղաքական կենաց» (15):

Հ. Ղ. Ալիշանը սոյն աշխատութեան «Մովսէս Խորենացի» բաժնում, ուսումնասիրելով փաստերը, ապացուցում է, որ մեծահամբաւ Մովսէսը, Քերթովահայրը եւ Մովսէս Խորենացին, Պատ-

20 Հարկ չենք համարում անդրադառնալ եւրոպացի հայագետների քննադատական հարցերին, քանի որ գրականագիտութիւնը բազմիցս է անդրադարձել դրանց՝ տալով գիտականօրէն հիմնաւոր ու սպառիչ պատասխաններ: Այս մասին մանրամասն տե՛ս ՄԱԼԽԱՍԵԱՆ, Ս., *Խորենացու առեղծուածի շուրջը*, Երեւան 1940; ԱՐԵՂԵԱՆ, Մ., *Մովսէս Խորենացի*, Երկեր, Գ., Երեւան 1968, 282-286; ԹԱՄՐԱՋԵԱՆ, Հ., *Մովսէս Խորենացի*, Երկեր, Ա., Երեւան 2006, 98-101; «Հանդէս ամսօրեայ», Վիեննա 1898, քիւ 8, 258-267:

մագիրը, Փիլիսոփան, Սրբազանն, Երանելին, «հոչակեալն ընդ տիեզերս» եւ այլն, նոյն մարդն են. «Այս անտարակոյս է որ ամենայն հեղինակք մեր՝ պատմիչք եւ ոչ պատմիչք, թէ՛ Խորենացի անուանելով թէ՛ ոչ՝ մեծահամբաւ Մովսէս մի յիշեն, եւ իբր գերագոյն քան զամենեւին իրանցմէ առաջ եղած հեղինակ մի» (117): Նա բանավիճում, բազմաթիւ փաստերով պաշտպանում է այն թեզը, որ Խորենացին ոչ թէ վեց կամ եօթ, կամ աւելի ուշ դարի պատմիչ է, այլ հինգերորդ դարի՝ վկայակոչելով Սերէոսին, Յովսիային, Յովհ. Կաթողիկոսին: Նա ասում է. «Ինչպէ՞ս է. դարու նաեւ առջի կիսուն մէջ գրողն՝ ոչ միայն արաքացւոց աշխարհակալութեան յիշատակ մի չերեցներ, այլ եւ այն տիեզերադորդ յեղափոխութեան ատեն, մանաւանդ իր աշխարհին եւ ազգին հանդիպածներուն մէջ գտնուելով եւ տեսնելով՝ նստի եւ այդպէս անզգայաբար իր ազգին հին առասպելներն հիւսէ... իր ոճն, հոգին եւ հառաչանքն հնութեան քննադրողն ունին» (122): Բարձր է գնահատում այն, որ Խորենացին ունի մանկական պարզութիւնից մինչեւ մարգարէական ոճով եւ ոգով պատգամներ՝ «հրեղէն, սրտառուչ եւ յափշտակից հառաչանքներ»:

2. Ալիշանը այստեղ կրկին անդրադառնում եւ քննում է «Հայոց Պատմութեան» չորրորդ գլխի խնդիրը, սակայն այդպէս էլ սպառնիչ պատասխան չի գտնում. «Յիշած եմ եւս՝ որ Ռոշֆեան Ստեփանոսի հայ-լատին բառագրոց մէջ չեն գտնուիր. բայց կրնայ եւս ըլլալ որ այդ Հայոց Պատմութեան դուրս առանձին պատմական գրութեան ըլլան. ինչպէս են Ոսկեանց եւ Սուփիասանց պատմութիւնք, Ամասիոյ շինութեան պատմութիւնն ի վկայարանութեան Ս. Թեոդորոսի. եւ Յովսիայ ըսածն՝ թէ «Երանելին Մովսէս Քերթոզա-հայրն՝ ի Պատմութեան ուրեմն ասէ. Ջայսու ժամանակաւ երանելին Թաթուլ, երկրորդ Անտոն, ընդ գագանս եւ ընդ վիշապս բնակեալ՝ ընտանեակայր, եւ իբրեւ զանմարմին մարմնով հանդիսանայր: Եւ այլ որ ինչ քան զայսոսիկ գեղեցկագոյն հիւսէ Պատմութիւնս»: Նշանաւոր վկայութիւն ե՛ւ Պատմութեան ե՛ւ ժամանակին. զի լաւ գիտեմք թէ Թաթուլ եւ եղբայրն Վարոս աշակերտք էին Սահակայ եւ Մեսրոպայ» (122-123):

Պատմահօրը նուիրուած բաժինն աւարտում է նրանով, որ պէտք մի շարք հարցեր լրջօրէն պարզել, ուսումնասիրել՝ ժամանակագրութեան, դէպքերի անճշտութեան հետ կապուած:

Ինչպէս վերը նշուեց, բացի առանձին յօդուածներէից, Մ. Խորենացուն Հ. 2. Ալիշանը յիշատակում եւ արժեւորում է իր միւս աշխատութիւններում, ինչն առանձին ուսումնասիրութեան նիւթ է:

Այսպիսով՝ Հ. Ղ. Ալիշանը առաջ է քաշում կենսականորեն անհրաժեշտ եւ շատ կողմերով գերարդիական մի քանի խնդիրներ²¹։ Դրանով պայմանաւորուած՝ վերարժեւորում է Մ. Խորենացուն, նրա «Հայոց պատմութեան» հերոսականութիւնը, հին քաղաքական կեանքը հակադրում ներկայ վիճակին։ «Հայ պատմութեան փառաւոր էջերը լուսաւորելով՝ նա ձգտում ունէր ժողովրդին ֆաղափականօրէն ինքն իրեն ֆանաչել տալ»²²։ Չէ՞ որ Պատմահայրը հիւսում է նախնեաց քաղաքական գործերի պատմութիւնը, բարձր գնահատում պետականութիւնը, ինքնագիտակցութիւնը, հոգեւոր հարստութիւնը, ներքին դիմադրութեան հարցը, մարդկային արժանապատուութիւնը։ «Մովսէս Խորենացին ամէնուր դրել է նոր սկիզբ՝ ֆանապարհ րացելով հայկական գաղափարախօսութեան, գրական մտքի ու ֆինադատութեան առաջ»²³։ Խորենացին համոզուած է՝ պատմութիւնը արդիւնք է. չկայ պետականութիւն, չկայ նաեւ պատմութիւն։

Ժողովրդական կեանքի բուն իմաստը եւ գոյութեան իսկական ձեւը ինչպէս Խորենացին, այնպէս էլ Ալիշանը համարում է ինքնուրոյն պետականութիւնը։ Սա գերարդիական նշանակութիւն ունի։ Մենք բնիկ տէրն ենք մեր երկրի։ Այստեղից էլ՝ հարազատ երկրի յաւերժական պաշտպանութեան, անկախութեան եւ ազատութեան հարցը՝ իբրեւ զարեւից եկած սրբազան պատգամ։ Եւ վերջապէս՝ «Ալիշանը հոյակապօրէն կատարած է այն գործը զոր ուզած է կատարել, եւ որ, շարունակելով Խորենացւոյն եւ Զամչեանին գործը, իրեն գլխաւոր նպատակ ունէր հայ ժողովրդին ներշնչել կազդուրիչ ու ազնուացուցիչ հպարտութիւնը մեծ ու փառաւոր անցեալ մը ունեցած ըլլալու»²⁴։

ՆԱՌԱ ՍԱՐԳՍԵԱՆ

-
- 21 «Հայ ֆաղափական մտքի պատմութեան մէջ առաջիններից մէկը Ալիշանն էր, որ անդրադարձաւ հայրենիքի գաղափարին»։ Տե՛ս ՅՈՎԱԿԱՆԵԱՆ, Յ., *Ղեւոնդ Ալիշանի կենսագրութիւնը*, Եր. 2002, 43։
- 22 ՏԵՐՏԵՐԵԱՆ, Ա., *Հայ կլասիկներ*, Եր. 1944, 6։
- 23 ԹԱՄՐԱԶԵԱՆ, Հ., *Մովսէս Խորենացի, Երկեր*, Ա., Եր. 2006, 159։
- 24 ԶՕՊԱՆԵԱՆ, Ա., *Դէմքեր*, 88։

Summary

MOVSES KHORENATSI BY Fr. GHEVOND ALISHAN

NARA SARGSYAN

The article examines the articles of Fr. Gh. Alishan dedicated to M. Khorenatsi. The focus is on the circumstance that the scientist and poet Fr. Gh. Alishan was one of the first who rethought and overestimated the exceptional role and significance of the unique personality of M. Khorenatsi and his *"History of Armenia"* in the matter of preserving the identity, statehood and dignity of the Armenian people. Turning to the past, Alishan aimed to present generations an example of worthy deeds and instill in them political ideals, a sense of pride and self-awareness. Now this remains topical as before..